


ՄՓՅՈՒՌՔԸ ԿԱՊԻ ՄԵՋ Է

ԱՌՑԱՆՑ ՀԱՆՂԻՊՈՒՄՆԵՐ «ՔԱՅԼ ԴԵՊԻ ՏՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ



ծրագրով, խաղերով ու վիրտուալ այցերով Հայաստանն «այցելեց» նրանց: Հարյուրավոր հայ պատանիներ աշխարհի տարբեր ծայրերից ՋՈՄ հարթակում միացան մեկ համահայկական էկրանի առջև: Կարծես աշխարհը փոքրացավ ու դարձավ մի էկրան ու մի մեծ Հայաստան: Նույնիսկ ոչ անմիջական հանդիպումը չխանգարեց մասնակիցներին զգալ հայրենիքի կարոտն ու ջերմությունը, մի-



Միև շուր ու անսպասելի հիվանդությունը կորոնավիրուսը (թագավարակ), շարունակում է իր պտույտը աշխարհով մեկ, մարդկությունը բազմաթիվ խրնդիքների առջև է կանգնում կենդանի և անմիջական հանդիպումները չեղարկվելու պատճառով: Եփումը դառնում է վիրտուալ, մտքերն ու հույզերը փոխանցվում են էկրանի միջոցով, շատ սպասված ու երանելի հանդիպումներ դառնում են առցանց:



Ծրագրի ժամանակ Ռոստովի մարզի Չալսթրի համար 3 դպրոցի 11-րդ դաս. աշակերտուհի Տաթևիկ Մահալյանը ստեղծեց ու ներկայացրեց իր բրենդը հայկական խորհրդանիշով ժամանակակից պայուսակ (առտթթ):

ՀՀ սփյուռքի գլխավոր հանձնակատարի գրասենյակը, «Դասավանդի ր, Հայաստան» կրթական հիմնադրամի հետ համատեղ իրագործեց հերթական ծրագիրը «Քայլ դեպի տուն»-ը, որը նախատեսված է սփյուռքահայ պատանիների և երիտասարդների համար:

Համահայկական այս ծրագրի շրջանակում օտար ափերում ապրող բազմաթիվ երեխաներ ամեն տարի մասնակցում էին Մայր Հայաստանում կազմակերպվող դասընթացներին, ծանոթանում հայոց պատմությանը, լեզվին ու մշակույթին: Շատերի համար այդ հանդիպումը սպասված ու երանելի էր: Քանի որ սփյուռքի երեխաներն ու պատանիներն այս տարի հնարավորություն չունեցան հայրենիքը ճանաչել ֆիզիկական այցելությամբ, «Քայլ դեպի տուն»

յանց փոխանցել իրենց հույզերն ու սպրունները, ձեռք բերել նոր ընկերներ: Մի քանի ժամ տևող պատմության ու հայոց լեզվի դասընթացները, ինտերակտիվ քրննարկումները, բանավեճի ակումբը, առցանց կրթական խաղերը, հանդիպումները մշակույթի և արվեստի գործիչների հետ անցնում էին մեկ շնչով ու մեծ ոգևորությամբ: Էկրանի տարբեր կողմերում հնչող «կիսատ-պատ» հայերենն անգամ չէր խանգարում մասնակիցների հուզառատ հանդիպումներին: Հարագատ ու միաժամանակ անձանոթ այս երեխաները հայ էին ճակատագրի քմահաճությամբ աշխարհի տարբեր երկրներում հայտնված: Ռուսաստանի Դաշնություն, Ուկրաինա, Մակեդոնիա, Իրան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Ֆրանսիա...

Ավելի արդյունավետ դարձնելով գործընթացը մասնակիցները բաժանվել էին խմբերի: «Արարատ» խմբի ղեկավար ու պատմության ուսուցիչ Նարեկ Հակոբյանը (ով, ի դեպ, աշխատում է նաև Մատենադարանում), մեծ պատասխանատվությամբ

եր ներկայացնում մեր դարավոր պատմության էջերը: Երեխաները նոր սովորած հայերենով սկսեցին արտասանել, երգել, մասնակցել վիրտուալ էքսկուրսիաների: Բեմադրեցին Թումանյանի «Կիկոսի մահը» հեքիաթը, ստեղծեցին իրենց լոգոն հայկական խորհրդանիշերով, ներկայացրեցին իրենց սեփական նախագծերը: Ծրագրի առաջին փուլում երկու շաբաթ ՀԱՅԴԵՄԻՔՆ «այցելեց» ավելի քան 28 երկիր և մեր սիրելի երիտասարդների փոխանցեց ջերմություն, հավատ ու սեր: Հայրենիքը նաև հեռավար տեսնելու, զգալու ու սիրելու անսպասելի հանդիպումներ: «ՀԱՅՈՒՐ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՏՄԵԼ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ», — այս կարգախոսով մասնակիցներն ամփոփեցին ու հրաժեշտ տվեցին միմյանց ՋՈՄ-ում, սակայն, համոզված են, որ ստացած գիտելիքներն ու տպավորությունները դեռ երկար կկիսեն միմյանց հետ այլ հարթակներում:

Շովինաթ ՄԱՐԳՅԱՆ, ուսուցչուհի

ԿԱՅԱՑԱՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԱՌՑԱՆՑ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎՆԵՐԸ

2020 թվականի օգոստոսի 22-24-ը Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը ՀՀԸՄ հայկական վիրտուալ համալսարանի հետ (ՀՎՀ) միասին կազմակերպեց «Հայաստան-սփյուռք համագործակցությունը covid-19-ի պայմաններում. մարտահրավերներ և հնարավորություններ» խորագրով համահայկական կրթական առցանց աշխատաժողովները:

գրերի իրականացման փորձով, մատնանշել սփյուռքի համար հեռավար կրթական ծրագրերի դրական ներուժի զարգացման հեռանկարները: Առցանց ժողովներին մասնակցեցին սփյուռքում ազգային կրթության և դաստիարակության հարցերով հետաքրքրված մարմիններ, անձինք (դասագրքերի և ծրագրերի հեղինակներ, դասախոսներ, ուսուցիչներ), հեռավար կրթության կազմակերպիչներ: Աշխատաժողովները կայացան հետևյալ ուղղություններով. 1. Հեռավար կրթության դերն ու նշանակությունը սփյուռքում ազգային կրթության և դաստիարակության գործում.

Infographic titled 'ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԱՌՑԱՆՑ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎՆԵՐ' showing a grid of participants with their names and titles. Includes logos of the Ministry of Education and the project itself.



2. Սփյուռքի տարբեր հատվածների հորիզոնական համագործակցության հնարավորությունները և հեռանկարները. 3. Հայաստանի Հանրապետության սփյուռքում կրթության գործին աջակցության ծրագրերը, դրանց նպատակները և բովանդակությունը: Քննարկումների թեմատիկ օրակարգը ձևավորվել էր ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Հայաստանի, Արցախի ու սփյուռքի մասնակիցների առաջարկների հիման վրա: Առավել մեծ նշանակությունը տրվել էր թագավարակի պայմաններում սփյուռքում համակարգված, ինստիտուցիոնալ որոշումների հիման վրա աշխատանքի կազմակերպման դրական փորձի ներկայացմանը: Անկախվում էր բացահայտել այնպիսի հեռավար ուսուցման պրակտիկաներ, ծրագրեր, մեթոդներ, որոնք հնարավոր կլինի տարածել նաև այլ համայնքներում և որոնք կարող են ընդհանուր կրթական դաշտի համար նախապայման հանդիսանալ: Աշխատաժողովներն անցկացնելու համար օգտագործվեց ՀՀԸՄ ՀՎՀ-ի հարթակը, որտեղ տեղադրվեցին հայտարարություններ, օգտակար հղումներ, օրակարգը, խոսնակների զեկույցների համառոտ նկարագրությունը, կազմակերպվեցին առցանց

քննարկումներ: Աշխատաժողովներն անցկացվեցին առցանց Zoom հարթակում, իսկ կայացած առցանց աշխատաժողովների տեսագրությունները տեղադրվեցին ՀՎՀ-ի հարթակում: Քննարկումներն անչափ հետաքրքիր էին, բազմազան ու բազմաբովանդակ, աշխարհի 36 երկրից 1000-ից ավելի կրթության մշակներ էին մասնակցում համաժողովին, աշխարհի տարբեր անկյուններից 13 բանախոս ներկայացրեցին նոր կախագծեր, ծրագրեր, իրենց տեսլականը հայագիտական առարկաների դասավանդման, զարգացման շուրջ: Ամփոփելով եռօրյա խորհրդաժողովը՝ ՀՀԸՄ ՀՎՀ-ի հիմնադիր նախագահ դոկտոր Երվանդ Ջորյանը նշեց, որ մենք համընդհանուր ազգ ենք և համացանցը մեզ համար հրաշալի նվեր է, որ առցանց աշխատանքը պիտի ներառեք մեր կրթության ոլորտ հասնելով ամենահեռու և ամենափոքր համայնքներ: Դոկտոր Երվանդ Ջորյանը նշեց նաև, որ ստեղծված այս հարթակը պիտի փորձենք կյանքի կոչել, կենդանի պահել, բոլոր նյութերը, կարծիքները, վերլուծությունները կիրառել կյանքում և մեր հանդիպումները դարձնել շարունակական: Պատրաստեց Արմինե ՀՈՎՄԵԹՅԱՆԸ